

3091



ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ
Զ Ր Ո Ւ Յ Ց Ը

ՊԱՐՈՆ ՌՈՅ ՀՈՈՒԱՐԴԻ ՀԵՏ

31<33
Ը-47

} ԱՅԿԱՌՈՒՄ ՀՐԱՏ

3K33

C-47

20 NOV 2005

21 JUN 2005

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԶՐՈՒՅՑԸ

ԱՄԵՐԻԿԱՆ «ՍԿՐԻՊՏ-ՇՈՒԱՐԴ ՆՅՈՒՋ
ՓԵՅՓԸՐԶ» ԼՐԱԳՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՌՈՅ ՇՈՒԱՐԴԻ ՀԵՏ

1936 թ. ՄԱՐՏԻ 1-ԻՆ



ՀԿ(Բ)Կ ԿԿ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1936

AUG 2013

3091


2005 JUL 18



2982-48

БЕСЕДА ТОВАРИЩА **СТАЛИНА**
С Г-НОМ РОЙ ГОВАРДОМ

Армпартиздат, Эривань



И. Сталин

ՀՈՈՒԱՐԴ.—Ի՞նչ հետևանքներ կունենան, ձեր կարծիքով, ճապոնիայի վերջին անցքերը Հեռավոր-Արևելքի դրության համար:

ՄՏԱԼԻՆ.—Առայժմ դժվար է ասել: Դրա համար շատ քիչ նյութ կա: Պատկերը բավականաչափ պարզ չէ:

ՀՈՈՒԱՐԴ.—Ի՞նչ դերք կբռնի խորհրդային Միությունն այն դեպքում, յեթե ճապոնիան սիրտ անի լուրջ հարձակում դուրսնալ Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետության վրա:

ՄՏԱԼԻՆ.—Այն դեպքում, յեթե ճապոնիան սիրտ անի հարձակվելու Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետության վրա, սպառնալով նրա անկախությանը, մենք

հարկադրված կլինենք ողնելու Մոնղոլիայի
Ժողովրդական Հանրապետությանը։ Արդեն
Լիտվինովի տեղակալ Ստոմոնյակովը վեր-
ջերս այդ հայտարարել է Մոսկվայի ճապո-
նական դեսպանին, մատնանշելով այն ան-
շուք բարեկամական հարաբերությունները,
վորոնք պահպանում է իՍՀՄ-ն Մոնղոլիա-
յի Ժողովրդական Հանրապետության հետ
1921 թվականից։ Մենք Մոնղոլիայի Ժողո-
վրդական Հանրապետությանը կողնենք
այնպես, ինչպես ողնեցինք նրան 1921
թվականին։

ՀՈՈՒԱՐԴ.—Այդպիսով ճապոնիայի
կողմից Ուլան-Ֆատորը դրավելու վորձը
կհանգեցնի՞ արդյոք դրական դործողու-
թյան իՍՀՄ-ի կողմից։

ՍՏԱԼԻՆ.—Այո՛, կհանգեցնի։

ՀՈՈՒԱՐԴ.—Արդյոք վերջին մի քանի
օրում ճապոնացիները Մոնղոլիայի Ժողո-
վրդական Հանրապետության սահմանա-
գլխին ցուցաբերե՞լ են այնպիսի վորևե ալ-
տիվություն, վորը իՍՀՄ-ի կողմից գնա-
հատվեր վորպես ազդեցիկ ախտվություն։

ՍՏԱԼԻՆ.—Ճապոնացիները, կարծեմ,
չարունակում են զորք կուտակել Մոնղո-
լիայի Ժողովրդական Հանրապետության
սահմանների մոտ, սակայն սահմանային
ընդհարումներ առաջ բերելու վորևե նոր
փորձ առաջժմ չի նկատվում։

ՀՈՈՒԱՐԴ.—Խորհրդային Միությունը
յերկյուղ է կրում, վոր Գերմանիան և Լե-
հաստանն իր դեմ ուղղված ազդեցիկ դի-
տավորություններ ունեն և նախապատրաս-
տում են ռազմական մի համադործակցու-
թյուն, վորը պետք է ոգնի այդ դիտավո-
րությունների իրականացմանը։ Մինչդեռ
Լեհաստանը հայտարարում է, թե չի ցան-
կանում ոտաբերկրյա վորևե զորքի թույլ
տալ իր տերիտորիան ռզտադործել վորպես
բազա՝ յերրորդ պետություն հեմ ուղղված
ռպերացիաների համար։ Ի՞նչպես է պատ-
կերացնում իՍՀՄ-ն Գերմանիայի հարձա-
կումը։ Վո՞ր դիրքերից, ի՞նչ ուղղություն
կարող են դործել գերմանական զորքերը։

ՍՏԱԼԻՆ.—Պատմությունն ասում է, վոր
յերբ վորևե պետություն ուզում է պատե-

բազմեւ ուրիշ նույնիսկ վոչ հարեան պե-
տութեան հետ, նա սկսում ե սահմաններ
փնտռել, վորոնց վրայով կարողանա հաս-
նել այն պետութեան սահմաններին, վորի
վրա ուզում ե հարձակուիլ: Սովորաբար
ազերեսիվ պետութեան ալիսիսի սահման-
ներ գտնում ե: Նա գտնում ե դրանք կա՛մ
ուժի միջոցով, ինչպես այդ տեղի ունեցավ
1914 թվականին, յերբ Գերմանիան Բելգիա
ներխուժեց Ֆրանսիային հարվածելու հա-
մար, կա՛մ նա «վարկով» ե վերցնում այդ-
պիսի սահմանը, ինչպես այդ արեց Գերմա-
նիան Լատվիայի նկատմամբ, որինաւ, 1918
թվականին, վորձելով նրա վրայով ճանա-
պարհ բանալ դեպի Լենինգրադ: Յես չգի-
տեմ, թե Գերմանիան հատկապես ինչ
սահմաններ կարող ե հարմարեցնել իր նը-
պատակներին, բայց կարծում եմ, վոր
նրան «վարկով» սահման տրամադրել ցան-
կացողներ կարող են գտնուիլ:

ՀՈՈՒՍՈՒՄ. — Սմբողջ աշխարհում խո-
սում են պատերազմի մասին: Յեթե պատե-
րազմն իրոք անխուսափելի յե, ապա, միւ-

տըր Ստալին, ձեր կարծիքով յե՞րբ կպայ-
թի այն:

ՍՏԱԼԻՆ. — Այդ հնարավոր չե նախագու-
շակել: Պատերազմը կարող ե պայթել
անսպասելիորեն: Այժմ պատերազմները չեն
հայտարարվում: Դրանք պարզապես ըս-
կում են: Բայց մյուս կողմից յես
գտնում եմ, վոր խաղաղութեան բարեկամ-
ների դիրքերն ամրանում են: Խաղաղու-
թեան բարեկամները կարող են աշխատել
բացահայտորեն, նրանք հենվում են հասա-
րակական կարծիքի ուժի վրա, նրանց տրա-
մադրութեան տակ են այնպիսի գործիքներ,
ինչպես, որինաւ, Ազգերի Լիգան: Դա
պլյուս ե խաղաղութեան բարեկամների հա-
մար: Նրանց ուժն այն ե, վոր պատերազմի
դեմ ուղղված նրանց գործունեյութեանը
հենվում ե ժողովրդական լայն մասսաների
կամքի վրա: Ամբողջ աշխարհում չկա մի
ժողովուրդ, վորը պատերազմ ցանկանար:
Ինչ վերաբերում ե խաղաղութեան իշխամի-
ներին, ապա նրանք ստիպված են դադարի
գործել: Դա միևնուս ե խաղաղութեան թըը-

նամինների համար: Իմիջի աշխոյ, չի բա-
ցառված, վոր հենց այդ պատճառով նրանք
կարող են դիմել պատերազմական արկա-
ծախնդրության, վորպէս հոսահատության
մի աղտի:

Խաղաղության բարեկամներն դործի նո-
րադուլն հաջողություններն մեկն և վո-
խաղարձ ոգնության Ֆրանս-խորհրդային
պայմանագրի վաղեմացումը Ֆրանսիայի
պատգամավորների պալատի կողմից: Այդ
պայմանագիրը վորոչ պատենչ և խաղաղու-
թյան թշնամիների դեմ:

ՀՈՈՒԱՐԴ.—Յեթե պատերազմ բռնկի,
սպա նախ և առաջ աշխարհիս վո՞ր մասում
կարող է պայթել այն: Վո՞րտեղ են ամե-
նից չատ խտացել պատերազմի ամպրոպային
ամպերը—Արեւելքո՞ւմ, թե՞ Արեւմուտքում:

ՍՏԱԼԻՆ.—Ըստ իս՝ պատերազմի վտան-
գի յերկու ոջախ կա: Առաջին ոջախը գըտ-
նելում է Հեւալոր Արեւելքում, ճապոնիա-
յի գոտում: Յես աչքի առաջ ունեմ ճապո-
նական զինվորականների բաղմիցս արած
հայտարարությունները՝ մյուս պետու-

թյունների հասցեյին ուղղված սպառնա-
լիքներով: Յերկրորդ ոջախը - գտնվում է
Գերմանիայի գոտում: Դժվար է ասել, թե
վոր ոջախն ավելի սպառնալից և, բայց
դրանք յերկուսն էլ գոյություն ունեն և
դործում են: Համեմատած պատերազմի
վտանգի այդ յերկու հիմնական ոջախների
հետ, իտալ-հարեչական պատերազմը մի
եպիկոր է: Առայժմ ամենամեծ աղտիվու-
թյուն է ցուցաբերում վտանգի հեռավոր-
արեւելյան ոջախը: Սակայն, կարող է պա-
տահել, վոր վտանգի այդ կենտրոնը Յեվ-
րոպա փոխադրվի: Այդ է վկայում թեկուզ
վերջերս տեղի ունեցած այն զրույցը, վոր
տվել է պ. Հիտլերը Ֆրանսական մի թեր-
թի: Հիտլերն այդ զրույցի մեջ կարծես
փորձում է խաղաղասիրական բաներ առել,
բայց իր այս «խաղաղասիրության» վրա նա
այնքան չատ սպառնալիքներ է ավելացնում
Ֆրանսիայի և Խորհրդային Միության դեմ,
վոր «խաղաղասիրությունից» վոչինչ չի
մնում: Ինչպէս տեսնում եք, նույնիսկ այն
ժամանակ, յերբ պ. Հիտլերն ուզում է խա-

դադուլթյան մասին խոսել, նա չի կարողանում կառավարվել առանց սպառնալիքների: Դա սխալ տոմ է:

ՀՈՌԻԱՐԴ. — Ձեր կարծիքով վո՞րն է արդի պատերազմի վտանգի հիմնական պատճառը:

ՄՏԱԼԻՆ. — Կապիտալիզմը:

ՀՈՌԻԱՐԴ. — Կապիտալիզմի հատկապես վո՞ր արտահայտումները:

ՄՏԱԼԻՆ. — Նրա իմպերիալիստական, համաշխարհային արտահայտումները:

Դուք հիշում եք, թե ինչպես ծագեց առաջին համաշխարհային պատերազմը: Նա ծագեց աշխարհը վերաբաժանելու ցանկությունից: Այժմ ել աստուր նույնն է: Կան կապիտալիստական պետութայուններ, վորոնք իրենց զրկված են համարում ազդեցութայն վորորոնների, տերիտորիաների, հումքի աղբյուրների, շուկաների և այլնի նախորդ բաժանման ժամանակ և վորոնք կուռնյին կրկին վերաբաժանել դրանք՝ հոգուտ իրենց: Կապիտալիզմն իր իմպերիալիստական փուլում այնպիսի մի սխրտեմ է,

վորը պատերազմն որինական մեթոդ է համարում միջադեպին հակասութայունները լուծելու համար, որինական մեթոդ՝ յեթե վոչ իրավաբանորեն, գեթ ըստ ելութայն:

ՀՈՌԻԱՐԴ. — Արդյոք դուք չե՞ք դանում, վոր կապիտալիստական յերկիրներում կարող է հիմնալոր յերկյուղ լինել, թե՛ չլինի խորհրդային Միութայնը վորոյի ուժով մյուս ժողովուրդների վլին փաթաթել իր քաղաքական թերիաները:

ՄՏԱԼԻՆ. — Այդպիսի յերկյուղների համար վոչ մի հիմք չկա: Յեթե դուք կարծում եք, վոր խորհրդային մարդիկ ցանկանում են իրենք և այն ել ուժով փոխել չրջապատի պետութայունների դեմքը, ապա դուք խիստ մոլորվում եք: խորհրդային մարդիկ, իհարկե, ցանկանում են, վոր չըրջապատի պետութայունների դեմքը փոխվի, բայց դա հենց իրենց չրջապատի պետութայունների դործն է: Յես չեմ տեսում, թե ինչ վտանգ կարող են տեսնել չրջապատի պետութայունները խորհրդային մարդկանց զաղապարներում, յեթե այդ պետու-

թյուններն իրոք ամուր են նստած թամբին։
ՀՈՈՒԱՐԴ.—Արդյոք ձեր այդ հայտարարու-
թյունը նշանակում է, վոր Խորհրդա-
յին Միությունը վորևէ չափով թողել է
համաշխարհային հեղափոխություն առաջ
բերելու իր պլանն ու գիտափորություննե-
րը։

ՍՏԱԼԻՆ.—Մենք այդպիսի պլաններ ու
գիտափորություններ չենք բնակել։

ՀՈՈՒԱՐԴ.— Յես, միտքը Ստալին,
կարծում եմ, վոր ամբողջ աշխարհում յեր-
կար ժամանակվա ընթացքում այլ տպավո-
րություն է ստեղծվել։

ՍՏԱԼԻՆ.— Դա թյուրիմացության ար-
դյունք է։

ՀՈՈՒԱՐԴ.— Տրագիկական թյուրիմա-
ցություն։

ՍՏԱԼԻՆ.— Վո՛չ, կոմիկական։ Կամ,
թերևս, տրագիկոմիկական։

Գրեթե ինչ, մենք, մարքսիստներս,
գտնում ենք, վոր հեղափոխություն տեղի
կունենա նաև մյուս յերկիրներում։ Սակայն
նա տեղի կունենա միմիայն այն ժամանակ,

յերբ այդ հնարավոր ու հարկավոր կհա-
մարեն այդ յերկիրների հեղափոխականնե-
րը։ Հեղափոխության արտահանումն ան-
հեթեթություն է։ Յուրաքանչյուր յերկիր,
յեթե ցանկանա, ինքը կկատարի իր հեղա-
փոխությունը, իսկ յեթե չցանկանա, հեղա-
փոխություն չի լինի։ Ահա, որինակ, մեր
յերկիրն ուղեց հեղափոխություն կատարել
ու կատարեց, և այժմ մենք կառուցում ենք
նոր անդամակարգ հասարակություն։ Սա-
կայն պնդել, թե մենք ուղում ենք, իբրև
թե, հեղափոխություն կատարել մյուս յեր-
կիրներում, միջամտելով նրանց կյանքին,—
նշանակում է ասել այն, ինչ վոր չկա և
ինչ վոր մենք յերբեք չենք քաջուղել։

ՀՈՈՒԱՐԴ.— ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև
գլխաձգված հարաբերություններ
հաստատվելու պահին նախագահ Ռուզվել-
տը և պարոն Լիտվինովը նույնական նո-
տաներ փոխանակեցին պրոպագանդայի հար-
ցի շուրջը։ Պարոն Լիտվինովի կողմից նա-
խագահ Ռուզվելտին ուղղված նամակի
չորրորդ կետում ասված է, վոր Խորհրդա-

2982-48

յին կառավարութիւնը պարտավորուած է
 «Թույլ չտալ, վոր իր տերիտորիայում
 կազմվեն կամ գտնվեն վորեւիցե կազմա-
 կերպութիւններ կամ խմբեր, և իր տերի-
 տորիայում նախազգուշական միջոցներ
 ձեռք առնել վորեւիցե կազմակերպութիւն-
 ների, կամ խմբերի, կամ ներկայացուցիչ-
 ների, կամ վորեւե կազմակերպութիւնների
 վրամ խմբերի պաշտօնատար անձերի այն-
 պիսի գործունեութեան դեմ, վորի նպա-
 տակն է ամբողջ Միացյալ Նահանգներում
 կամ նրանց տերիտորիաների ու տիրապե-
 տութիւնների մի մասում տապալել, կամ
 նախապատրաստել տապալումը, կամ ու-
 ժով փոխել քաղաքական վրամ սոցիալական
 կարգերը»: Յես խնդրում եմ ձեզ, միտքը
 Ստալին, բացատրեք ինձ, թե ինչո՞ւ պա-
 րոն Լիտվինովն ստորագրել է այդ նամա-
 կը, յետե այդ կետի թելադրած պարտա-
 վորութիւնները կատարումն անհամատե-
 դելի յետ Սորճրդային Միութեան ցանկու-
 թիւները հետ, կամ նրա իշխանութիւնից
 դուրս է:

ՍՏԱԼԻՆ.—Ձեր կողմից մեջ բերված կե-
 տի պարտավորութիւնների կատարումը
 մեր ձեռքումն է, մենք այդ պարտավորու-
 թիւնները կատարել ենք և կատարելու
 յենք:

Մեր սահմանադրութեան համաձայն՝ քա-
 ղաքական եմիգրանտներն իրավունք ունեն
 ապրելու մեր տերիտորիայում: Մենք նը-
 րանց ապաստանի իրավունք ենք տալիս
 ճիշտ այնպես, ինչպես ԱՄՆ-ն ապաստանի
 իրավունք են տալիս քաղաքական եմի-
 գրանտներին: Լիտվին ակներե է, վոր յերբ
 Լիտվինովն ստորագրում էր այդ նամակը,
 նա յենում էր այն բանից, վոր նրա պա-
 րունակած պարտավորութիւնները յերկ-
 կողմ բնութթ ունեն: Դուք, միտքը Հոու-
 արդ, գտնո՞ւմ եք արդոք, վոր Ռուզվելտ-
 Լիտվինովի համաձայնութեանը հակասում
 է, յետե ԱՄՆ-ի տերիտորիայում գտնվում
 են ոուս սպիտակ գլարդիական եմիգրանտ-
 ներ, վորոնք Սորճուրդների դեմ և հո-
 դուս վասկիտալիզմի պրոպագանդա յեն
 մղում, վորոնք վայելում են ամերիկյան

քաղաքացիներէ յոլթական աջակցություն
նը և յերբեմն հանդիսանում են տեղորոշու-
ման խմբեր: Անտարակույս, այդ եմի-
գրանքներն ոգտվում են ԱՄՆ-ում գոյու-
թյուն ունեցող ապաստանի իրավունքից:
Ինչ վերաբերում է մեզ, ապա մենք մեր
տերիտորիայում վոչ մի տեղորոշու չենք
հանդուրժի՝ ում դեմ ել ծրագրեր նա իր
հանցագործությունները: Ըստ յերևու-
թիւն՝ ԱՄՆ-ում ապաստանի իրավունքն ա-
վելի լայն է մեկնաբանվում, քան մեր
յերկրում: Վոչինչ, մենք տրտունջ չու-
նենք:

Դուք թերևս ինձ կտարակեք, վոր մենք
համակրում ենք մեր տերիտորիայում
գտնվող քաղաքական այդ եմիգրանտնե-
րին: Սակայն մի՞թե չկան սպիտակ գլար-
դիական եմիգրանտներին համակրող ամե-
րիկյան քաղաքացիներ, այն եմիգրանտնե-
րին, վորոնք պրոպագանդա յեն մղում՝ հո-
գուտ կապիտալիզմի և ընդդէմ իմորհուրդ-
ներին: Հետեաբար ինչի՞ մասին է խոսքը:
Խոսքն այն մասին է, վոր չողենք այդ

մարդկանց, չֆինանսավորենք նրանց գոր-
ծունեյությունը: Խոսքն այն մասին է, վոր
յերկու յերկիրներէ պաշտոնատար անձերը
չխառնվեն մյուս յերկրի ներքին գործերին:
Մեր պաշտոնատար անձերն ազնվաբար
կատարում են այդ պարտավորությունը:
Յեթե նրանցից վորեւ մեկը թերացել է,
թող ասեն մեզ:

Յեթե շատ հեռու գնանք և պահանջենք
բոլոր սպիտակ գլարդիական եմիգրանտ-
ներին արտաքսել ԱՄՆ-ից, ապա այդ վո-
տընձություն կլիներ ապաստանի այն ի-
րավունքի դեմ, վոր հռչակված է թե՛
ԱՄՆ-ում, թե՛ ԽՍՀՄ-ում: Այստեղ պետք է
ընդունել պահանջներին ու հակապահանջնե-
րի վորոչ բանական սահման: Լիտվինովը
նախադաս Ռուզվելտին ուղղած իր նամակն
ստորագրել է վոչ վորպես մասնավոր անձ,
այլ վորպես պետության ներկայացուցիչ,
ճիշտ այնպես, ինչպես այդ արել է նաև նա-
խագահ Ռուզվելտը: Նրանց համաձայնու-
թյունը հանդիսանում է յերկու պետու-

թյունների համաձայնութուն: Մտորադրե-
լով այդ համաձայնութունը՝ թե՛ Լիտվի-
նովը, թե՛ նախագահ Ռուզվելտը, վորպես
յերկու պետութւնների ներկայացուցիչ-
ներ, նկատի ունեյին իրենց պետութեան
գործակալներին գործունէությունը, վո-
րոնք չպետք է խառնուէին և չեն խառնուի
մյուս կողմի ներքին գործերին: Յերկու
պետութւններում հռչակված ապաստանի
իրավունքը չեր կարող շոշափվել այդ հա-
մաձայնութեամբ: Այդ շրջանակներում
պետք է մեկնաբանել Ռուզվելտ-Լիտվինովի
համաձայնութւնը, վորպես յերկու պե-
տութւնների ներկայացուցիչների համա-
ձայնութւն:

ՀՈՈԻԱՐԴ.—Բայց մի՞թե ամերիկյան
պապիրակներ Բրոուդերը և Դարսին ան-
ցյալ տարի Մոսկվայում գումարված Կո-
մունիստական Ինտերնացիոնալի Դ-րդ կոն-
գրեսում կոչ չեյին անում բռնի կերպով
տապալել ամերիկյան կառավարութւնը:

ՍՏԱԼԻՆ.—Խոստովանում եմ, վոր ըն-
կերներ Բրոուդերի և Դարսիի ճառերը չեմ

հիշում, յես նույնիսկ չեմ հիշում, թե ին-
չի մասին են խոսել նրանք: Կարող
է պատահել, վոր այդպիսի մի բան ասած
լինեն: Սակայն խորհրդային մարդիկ չեն,
վոր ստեղծել են ամերիկյան կոմունիստա-
կան կուսակցութւնը: Այն ստեղծել են
ամերիկացիք: Նա ԱՄՆ-ում գոյութւն
ունի լեզալ կերպով, նա իր թեկնածուներն
է առաջադրում ընտրութւններին ժամա-
նակ, ներառյալ նաև նախագահական ընտ-
րութւնների ժամանակ: Յեթե ընկերներ
Բրոուդերը և Դարսին Մոսկվայում ճառով
հանդես են յեկել մի անգամ, ապա իրենց
տանը, ԱՄՆ-ում, նրանք այդպիսի և
նույնիսկ հավանորեն ավելի վճռական ճա-
ռերով հանդես են յեկել հարյուրավոր ան-
գամ: Չե՞ վոր ամերիկյան կոմունիստները
հնարավորութւն ունեն ազատորեն քարո-
զելու իրենց գաղափարները: Միանգամայն
սխալ կլինէր խորհրդային կառավարու-
թեանը պատասխանատու համարել ամե-
րիկյան կոմունիստների գործունէութեան
համար:

ՀՈՌՈՒԱՐԴ.—Այո՛, սակայն այս անգամ խոսքը վերաբերում է ամերիկյան կոմունիստների այն դործունեյությունը, վոր տեղի յե ունեցել խորհրդային տերիտորիայում՝ ի խախտումն Ռուզվելտ-Լիտվինովի համաձայնութեան չորրորդ կետի:

ՄՏԱԼԻՆ.—Ի՞նչ է ներկայացնում Կոմունիստական կուսակցութեան դործունեյությունը, ինչո՞վ կարող է դրսևորվել այն: Այդ դործունեյությունը սովորաբար կայանում է բանվորական մասսաներին կադմակերպելու մեջ, միտինգներ, ցույցեր, դործադուլներ և այլն կարմակերպելու մեջ: Միանգամայն հասկանալի յե, վոր ամերիկյան կոմունիստներն այդ բոլորը չեն կարող կատարել խորհրդային տերիտորիայում: Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, ամերիկյան բանվորները չկան:

ՀՈՐՈՒԱՐԴ.—Կարո՞ղ եմ արդյոք ձեր հայտարարությունը հասկանալ այնպես, թե կարելի յե գտնել փոխադարձ պարտավորությունների այնպիսի մեկնաբանու-

թյուն, վորով մեր յերկու յերկիրների բարի հարաբերությունները պահպանվեն ու շարունակվեն:

ՄՏԱԼԻՆ.—Այո՛, անպայման:

ՀՈՐՈՒԱՐԴ.—Դուք ընդունում եք, վոր ԽՍՀՄ-ում կոմունիստական հասարակություն դեռ չի կառուցված: Կառուցված է պետական սոցիալիզմ: Փաշիվիզմ և պետական սոցիալիզմ: Փաշիվիզմ և նացիոնալ-սոցիալիզմը Գերմանիայում պնդում են, թե իրենք ևս նման արդյունքների յեն հասել: Արդյոք հիշյալ բոլոր պետությունների համար ընդհանուր գիծ չե՞ անձի ազատութեան խախտումը և այլ զրկանքներ՝ հողուտ պետութեան:

ՄՏԱԼԻՆ.—«Պետական սոցիալիզմ» արտահայտությունը ձիշտ չե: Այդ տերմինով շատերը հասկանում են այնպիսի կարգ, յերբ հարստությունների վորոչ, յերբեմն բաժական նշանակալից մասն անցնում է պետութեան ձեռքը կամ նրա վերահսկողութեան տակ, մինչդեռ մեծ մասամբ դործարանները, Փարբիկաները և հողը մնում են մասնավոր անձերի ձեռքին, վորպես սե-

փականություն : Շատերն այսպէս են հասկանում «պետական սոցիալիզմը» : Յերբեմն այդ տերմինի տակ թագնւած են այնպիսի կարգեր, յերբ կապիտալիստական պետությունը պատերազմ պատրաստելու կամ մղելու համար իր ձեռքն է վերցնում վորոշ թիւով մասնավոր ձեռնարկութիւններ : Մեր կառուցած հասարակութիւնը բնավ չի կարելի «պետական սոցիալիզմ» անվանել : Մեր խորհրդային հասարակութիւնը սոցիալիստական է այն պատճառով, վոր ֆարբիկաների, գործարանների, հողի, բանկերի և տրանսպորտի միջոցների մասնավոր սեփականութիւնը մեզ մոտ վերացւած է և փոխարինւած է հանրային սեփականութեամբ : Հասարակական այն կազմակերպութիւնը, վոր ստեղծել ենք մենք, կարելի չէ անվանել խորհրդային, սոցիալիստական, դեռ լիովին չափաբաշխւած կազմակերպութիւն, բայց իր հիմքով հասարակութեան սոցիալիստական կազմակերպութիւն : Այդ հասարակութեան հիմքն է կազմում հանրային սեփականութիւնը,

պետական, աշխնքն համաժողովրդական, ինչպէս և կոոպերատիւ-կոլտնտեսային սեփականութիւնը : Վո՞չ իտալական ֆաշիզմը, վո՞չ ել դերմանական նացիոնալ-«սոցիալիզմը» վոչ մի ընդհանուր բան չունեն այդպիսի հասարակութեան հետ : Նախ և առաջ այն պատճառով, վոր այնտեղ ֆարբիկաների ու գործարանների, հողի, բանկերի, տրանսպորտի և այն մասնավոր սեփականութիւնն անձեռնմխելի չէ մնացել, և այդ պատճառով կապիտալիզմը Գերմանիայում և Իտալիայում մնում է ամբողջապէս իր ուժի մեջ :

Այո՛, դուք իրավացի յեք, մենք դեռ կոմունիստական հասարակութիւն չենք կառուցել : Այնքան ել հեշտ չէ այդպիսի հասարակութիւն կառուցել : Սոցիալիստական և կոմունիստական հասարակութեան տարբերութիւնը ձեզ, անշուշտ, հայտնի չէ : Սոցիալիստական հասարակութեան մեջ դեռևս գոյութիւն ունի գույքային վորոշ անհավասարութիւն : Սակայն սոցիալիստական հասարակութեան մեջ արդեն գոր-

ծաղրկութիւնն չկա, արդեն շահագործում
չկա, արդեն ազդութիւններն ճնշում
չկա: Սոցիալիստական հասարակութեան
մեջ յուրաքանչյուր վորդ պարտավոր է
աշխատել, թեպէտ է իր աշխատան-
քի համար դեռ իր պահանջմունքների
համեմատ չի ստանում, այլ իր գոր-
ծադրած աշխատանքի քանակի ու վորակի
համեմատ: Այդ իսկ պատճառով դեռ դո-
յութիւնն ունի աշխատավարձը, այն էլ ան-
հավասար, շերտավորված աշխատավար-
ձը: Միայն այն ժամանակ, յերբ հաջողվի
ստեղծել այնպիսի հասարակարդ, վոր
մարդիկ իրենց աշխատանքի համար հասա-
րակութիւնից ստանան վո՛չ թէ ըստ աշ-
խատանքի քանակի ու վորակի, այլ ըստ
իրենց պահանջմունքների, կարելի կլինի
ասել, թէ մենք կառուցել ենք կոմունիստա-
կան հասարակութիւն:

Դուք ասում եք, թէ մեր սոցիալիստա-
կան հասարակութիւնը կառուցելու համար
մենք ղոհաբերել ենք անձնական ազատու-
թիւնը և զրկանքներ ենք կրել: Ձեր հար-

ցում նկատվում է այն միտքը, թէ սոցիա-
լիստական հասարակութիւնը ժխտում է
անձնական ազատութիւնը: Այդ սխալ է:
Խհարկէ, վորեւ նոր բան կառուցելու հա-
մար կարիք է լինում խնայողութիւն անել,
միջոցներ կուտակել, ժամանակավորապէս
կրճատել իր պահանջմունքները և փոխ
վերցնել ուրիշներէ: Յեթե ուզում ես նոր
տուն կառուցել, փող ես կուտակում, ժա-
մանակավորապէս կրճատում ես ջո պա-
հանջմունքները, ալլապէս կարող ես պա-
տահել, վոր տունը կառուցել չկարողանաս:
Դա ավելի էս իրավացի յէ, յերբ խոսքը
վերաբերում է մարդկային ամբողջ նոր հա-
սարակութիւն կառուցելուն: Կարիք եր լի-
նում ժամանակավորապէս կրճատել մի քա-
նի պահանջմունքներ, համապատասխան
միջոցներ կուտակել և լարել ուժերը: Մենք
հենց այդպէս ել վարվեցինք և կառուցե-
ցինք սոցիալիստական հասարակութիւն:

Սակայն այդ հասարակութիւնը մենք
կառուցեցինք վո՛չ թէ անձնական ազատու-
թիւնը սահմանափակելու համար, այլ նրա

Համար, վոր մարդկային անձնավորու-
թյունն իրոք ազատ զգա իրեն: Այդ հասա-
րակությունը մենք կառուցեցինք անձնա-
կան իրական ազատության, առանց չա-
կերտների ազատության համար: Յես դըժ-
վարանում եմ պատկերացնել, թե անձնա-
կան ինչպիսի «ազատություն» կարող է ու-
նենալ այն գործադուրկը, վորը սոված ման
է դալիս և իր աշխատանքը գործադրելու
ասպարեզ չի գտնում: Իսկական ազատու-
թյուն կա միայն այնտեղ, վորտեղ վոչըն-
չացված է շահագործումը, վորտեղ չկա
վորոշ մարդկանց ճնշումը մյուսների կող-
մից, վորտեղ չկա գործադրկություն և
աղքատություն, վորտեղ մարդ չի դողում,
թե վաղը կարող է կորցնել իր աշխատան-
քը, բնակարանը, հացը: Միմիայն այդպի-
սի հասարակության մեջ հնարավոր է իս-
կական և վոչ թե թղթե անձնական ու ամեն
տեսակ ազատություն:

ՀՈՌԻՍՏԻ.—Դուք համատեղելի գտնո՞ւմ
եք արդյոք ամերիկյան դեմոկրատիայի և

խորհրդային սիստեմի զուգընթաց զարգա-
ցումը:

ՍՏԱԼԻՆ.—Ամերիկյան դեմոկրատիան և
խորհրդային սիստեմը կարող են խաղաղ
գոյություն ունենալ և մրցել: Սակայն մե-
կը չի կարող զարգանալով վերածվել մյու-
սին: Խորհրդային սիստեմը չի վերածի ա-
մերիկյան դեմոկրատիային և ընդհակա-
ռակը: Մեր խաղաղ համակեցությունը
հնարավոր է, յեթե ամեն տեսակ մանրու-
քի առթիվ բծախնդրություն չանենք իրար
նկատմամբ:

ՀՈՌԻՍՏԻ.—ԽՍՀՄ-ում մշակվում է նոր
սահմանադրություն, վորը նախատեսում է
ընտրական նոր սիստեմ: Ի՞նչ չափով կա-
րող է այդ նոր սիստեմը փոխել ԽՍՀՄ-ում
գոյություն ունեցող դրությունը, քանի
վոր ընտրություններին առաջվա նման
հանդես է դալու միայն մի կուսակցու-
թյուն:

ՍՏԱԼԻՆ.—Մեր նոր սահմանադրությու-
նը մենք կընդունենք յերևի այս տարվա
վերջերին: Սահմանադրություն մշակող

Հանձնաժողովն աշխատում է և շուտով պետք է ավարտի իր աշխատանքը: Ինչպես արդեն հայտարարվել է, նոր սահմանադրութեամբ՝ ընտրութիւնները լինելու չեն ընդհանուր, հալասար, ուղղակի և գաղտնի: Ձեզ շփոթութիւն է պատճառում այն, վոր այդ ընտրութիւնների ժամանակ հանդես է գալու միայն մի կուսակցութիւն: Դուք չեք տեսնում, թե ընտրական ինչպիսի պայքար կարող է լինել այդ պայմաններում: Անշուշտ ընտրութիւնների ժամանակ ընտրական ցուցակներ կառաջադրեն վո՛չ միայն կոմունիստական կուսակցութիւնը, այլև ամեն տեսակ հասարակական անկուսակցական կազմակերպութիւններ: Իսկ այդպիսիների թիւը մեզ մոտ հարյուրներ է կազմում: Մեզ մոտ չկան իրար հակադրվող կուսակցութիւններ, ճիշտ այնպես, ինչպես չկան մեզ մոտ կապիտալիստների և նրանց կողմից շահագործվող բանվորների իրար հակադիր դասակարգեր: Մեր հասարակութիւնը բաղկացած է բացառապես քաղաքի ու գյուղի

ազատ աշխատավորներից — բանվորներից, գյուղացիներից, ինտելիգենցիայից: Այդ խավերից յուրաքանչյուրը կարող է ունենալ իր հատուկ շահերը և արտացոլել դժբանք սոցյութիւն ունեցող բազմաթիւ հասարակական կազմակերպութիւնների միջոցով: Բայց քանի վոր դասակարգեր չկան, քանի վոր դասակարգերի սահմանները ջնջվում են, քանի վոր սոցիալիստական հասարակութիւն տարբեր խավերի միջև մնում է վորոշ, բայց վո՛չ արմատական տարբերութիւն, չի կարող սնեղատու հող լինել իբար դեմ պայքարող կուսակցութիւններ ստեղծելու համար: Վորտեղ չըկան մի քանի դասակարգեր, չեն կարող մի քանի կուսակցութիւններ լինել, վորովհետև կուսակցութիւնը դասակարգի մի մասն է:

Նայիտալ՝ «սոցիալիզմի» պայմաններում ևս գոյութիւն ունի միայն մի կուսակցութիւն: Սակայն Փաշխտական միակուսակցական այդ սխտեմից վոչինչ չի դուրս գա: Բանն այն է, վոր Գերմանիայում մնա-

ցել ե կապիտալիզմը, մնացել են դասա-
կարգերը, դասակարգային պայքարը, վո-
րը, միևնույն ե, դուրս կտրվի, այդ
թիւում նաև ներհակ դասակարգեր ներկա-
յացնող կուսակցութիւնները պայքարի աս-
պարեղում, ինչպես պրոլիտաց, ասենք,
Խաղանիայում: Խտակայում նույնպես դո-
յութիւն ունի միայն մի՝ Ֆաշիստական
կուսակցութիւն, բայց նույն պատճառնե-
րով այնտեղ ևս վոչինչ չի դուրս գա դրա-
նից:

Ինչո՞ւ մեր ընտրութիւններն ընդհանուր
են լինելու: Այն պատճառով, վոր բոլոր
քաղաքացիները, բացի դատարանով ընտ-
րական իրավունքից զրկվածներէից, ընտրե-
լու և ընտրվելու իրավունք են ունենալու:

Ինչո՞ւ մեր ընտրութիւնները հալասար
են լինելու: Վորովհետև վո՛չ գույքային
տարբերութիւնը (վորը մասամբ դեռ դո-
յութիւն ունի), վո՛չ ցեղային ու ազգային
պատկանելութիւնը վո՛չ մի արտոնու-
թիւն կամ վնաս չեն տալու: Կանայք վա-
յելելու յեն ակտիւ ու պասսիւ ընտրական

իրավունք՝ տղամարդկանց հետ հալասա-
րապես: Մեր ընտրութիւններն իսկական
հալասար ընտրութիւններ են լինելու:

Ինչո՞ւ դադանի: Հենց այն պատճառով,
վոր մենք ուզում ենք խորհրդային մարդ-
կանց լիակատար ազատութիւն տալ՝ քվե-
արկելու հոգևտ նրանց, ում ուզում են
ընտրել, ում վստահում են նրանք իրենց
չահերի ապահովումը:

Ինչո՞ւ ուղղակի: Վորովհետև ներկայա-
ցուցական բոլոր հիմնարկների համար,
ընդհուպ մինչև գերագույն որդանների հա-
մար, անմիջականորեն տեղեւրում կատար-
ված ընտրութիւններն ավելի լավ են ապա-
հովում մեր անծայրածիր յերկրի աշխատա-
վորութեան շահերը:

Ձեզ թիւում ե, թե ընտրական պայքար չի
լինի: Սակայն նա կլինի, և յես նախատե-
սում եմ ընտրական խիստ աշխույժ պայ-
քար: Մեզ մոտ քիչ չեն վատ աշխատող
հիմնարկներ: Պատահում ե, վոր իշխանու-
թեան այս կամ այն որդանը չի կարողա-
նում բավարարել քաղաքի և գյուղի աշ-

խատալորութեան այս կամ այն բաղմամբ
կողմանի ու հարաճուն պահանջներէց մի
քանիսը: Լալ դպրոց կառուցե՞լ ես ար-
դո՞ք, թե չես կառուցել: Բնակարանային
պայմանները բարելաւե՞լ ես արդո՞ք դու:
Դու բյուրոկրատ չե՞ս արդո՞ք: Ոգնե՞լ ես
արդո՞ք դու մեր աշխատանքն ավելի ար-
դունաւեաց, մեր կյանքն ավելի կուտու-
րական դարձնելու: Ահա այն չափանիշնե-
րը, վորով մոտենալու յեն միլիոնաւոր
ընտրողները թեկնածուներին, դեն չպրտե-
լով անպետքներին, ջնջելով նբանց՝ ցուցակ-
ներէց, առաջ քաշելով լավագույններին և ա-
ռաջադրելով նրանց թեկնածութեանը: Այո՛,
ընտրական պայքարն աշխույժ կլինի, նա
կընթանա բաղմամբով ամենասուր հարցերի
չուրջը, դիտաւորապէս ժողովրդի համար
առաջնակարգ նշանակութեան ունեցող
գործնական հարցերի շուրջը: Մեր նոր
ընտրական ակտեմը ձեռք կտա մեր բոլոր
հիմնարկներին ու կաղմակերպութեաննե-
րին, կհարկադրի նրանց բարելաւել իրենց
աշխատանքը: Ընդհանուր, հալածար, ուղ-

ղակի ու գաղտնի ընտրութեանները
կՍՀՄ-ում մի խարաղան կհանդիսանան
ազգայնակութեան ձեռքում՝ իշխանութեան
վատ աշխատող որդանների դեմ: Մեր նոր
խորհրդային սահմանադրութեանը, իմ
կարծիքով, ամենադեմոկրատական սահ-
մանադրութեանը կլինի աշխարհում զոյու-
թեան ունեցող բոլոր սահմանադրութեան-
ների մեջ:

Գրի առաւ Կ. Ումանսկի:

ՈՒՂՂԱԿԻ ՅԵՎ ՊԱՐԶՈՐՈՇ ՊԱՏԱՍԽԱՆ

„Պրավդա“-յի 1936 թ. մարտի 5-ի առաջնորդը

Այսօր «Պրավդան» հրապարակում է ընկեր Ստալինի զրույցն ամերիկյան «Սկրիպպս-Հոուարդ Նյուզ Փեյվերզ» լրագրային միավորման նախագահ պարոն Ռոյ Հոուարդի հետ, վորը տեղի ունեցավ այս տարվա մարտի 1-ին Մոսկվայում: Բացառիկ մեծ է ընկեր Ստալինի արած հայտարարությունների, նրա արտահայտած մտքերի նշանակությունը. դրանք վերաբերում են միջազգային քաղաքականության ամենասուր հարցերին և ԽՍՀՄ-ի սոցիալիստական չինարարության արժատական պրոբլեմներին:

Ամենից առաջ անհրաժեշտ է չեչտել ամերիկյան դործչի հարցերին ընկեր Ստալինի տված պատասխանների բացահայտ ուղ-

դամաւթյունը և սպառիչ պարզորոշությունը: Այստեղ, ինչպես ասում են, ամեն ինչ լրիւ ասված է, և ամեն ինչ բացատրւած է կլասիկ կերպով, համոզիչ:

Ուղղամտությունը և պարզորոշությունը հանդիսանում են ընկեր Ստալինի արտահայտած բոլոր մտքերի ու յերույթների բնորոշ գիծը: Այդ գիծը հատուկ է բոլշևիկէյան կուսակցության և խորհրդային կառավարության ամբողջ քաղաքականութեանը՝ ի տարբերութիւն բուրժուական կառավարութիւններից, վորոնք ուղղամտութիւնից ու պարզորոշութիւնից սովորաբար վախենում են այնպես, ինչպես կրակից: Ուղղակի ասենք, — բուրժուական յերկրներում քիչ չեն պետական այնպիսի դործիչներ, վորոնք մյուս պետութիւնների հետ իրենց ունեցած հարաբերութիւններում, ինչպես և իրենց յերկրի ժողովուրդներին հետ ունեցած հարաբերութիւններում, գիտեն և ընդունում են միայն մի մեթոդ՝ կեղծութիւն, դեմագոգիա, խաբէյութիւն և յերկրեսանիութիւն:

Յեւ զա դամանալի ել չե: Բաւական է, վոր այդպիսի դործիչ թույլ տա իրեն թեկուզ մի քիչ անկեղծութիւն, և ամբողջ աշխարհը կիմանա նրա բուն մտադրութիւնները, իսկ իմանալով, զայրույթով կլցվի, վորովհետեւ այդ մտադրութիւններին նպատակն է պատերազմ հրահրել՝ շահվելու համար ի հաշիւ այս կամ այն յերկրի ժողովուրդների: Մինչդեռ «ամբողջ աշխարհում», — ասում է Ստալինը, — չկա այնպիսի ժողովուրդ, վորը պատերազմ ցանկանա»: Դրա համար ել խաղաղության թշնամիները հարկադրված են դադարի աշխատել, ստել և մանեւրել՝ ժողովուրդներին դաստութիւնը թմրեցնելու համար:

Այդպիսի փարիսեցիութեան որինակ է հանդիսանում այն զրույցը, վորն ունեցավ վերջերս Հիտլերը Ֆրանսական մի թերթի ներկայացուցչի հետ: Այդ զրույցի ժամանակ խաղաղասիրութեան մասին արտասանված մեծադուրդ խոսքերը միայն մի համեմ են Ֆրանսիայի և Խորհրդային Միութեան հասցեյին ուղղված սպառնալիքների վրա:

Խորհրդային յերկիրը, նրա առաջնորդը, նրա գործիչները կարիք չունեն թաղցնելու իրենց մտադրությունները: Միջազգային հարաբերությունները ասպարեզում Խորհրդային Միության մտադրությունները հանրածանոթ են, նրանք ուղղված են միայն և միայն խաղաղությունը պաշտպանելուն: ԽՍՀՄ-ի խաղաղասիրությունը նոր ապացույցներ է կարիք չունի, նա ակներև է բոլորի համար: Այնուամենայնիվ ընկեր Ստալինը, ամերիկյան գործչի հետ ունեցած իր զրույցի ժամանակ, վերին աստիճանի հանդամանություն է կրկին ու կրկին անգամ բացատրեց, թե վորքան խորթ և խորհրդային հասարակակարգի համար մյուս յերկիրների գործերին միջամտելու քաղաքականությունը, հախչտակումների ու նախաձեռնների քաղաքականությունը թե վորքան անհեթեթ ու անհիմն են «խորհրդային պրոպագանդային» վերաբերյալ բարբաջանքները:

Ընկեր Ստալինը մատնացույց արեց պատերազմի ժամանակակից վտանգի յերկու

ոջախները և այն շարժառիթները, վորոնցով առաջնորդվում են հախչտակիչ պատերազմ պատրաստող պետությունները: Պատերազմի վտանգի առաջին ոջախը գտնվում է Հեռավոր Արևելքում՝ Ճապոնիայի գոտում, յերկրորդը՝ Գերմանիայի գոտում: Այդ յերկիրները կառավարող շրջանների հախչտակողական ձգտումները նույնքան պարզորոշ ու անտարակուսելի յեն, վորքան պարզորոշ ու անտարակուսելի յե Խորհրդային Միության խաղաղասիրական քաղաքականությունը: Խաղաղության թշնամիները տենդորեն պատերազմի յեն պատրաստվում՝ վառվելով ազդեցության վոլորտները, տերիտորիաները, հոմքի աղբյուրները, վաճառահանման շուկաները հոգուտ իրենց վերաբաժանելու բուռն ցանկությամբ: Խաղաղության բարեկամները նույնպես գործում են: Ֆրանսական պատգամավորների պալատի կողմից փոխադարձ ոգնության Փրանս-խորհրդային պայմանագրի վաճկապումը խաղաղության բարեկամների խորհոր հաջողությունն է:

Խորհրդային Միությունը պատրաստ է ամեն բանի: Նա ի վիճակի յե իր սեփական ուժերով հետ մղելու թշնամիների հարվածը՝ վորքան ել լինեն նրանք: Նա պատրաստ է նաև, մյուս յերկիրների հետ միասին, պաշտպանել խաղաղության գործը: Խաղաղությունը խախտելու ամեն մի փորձ, Խորհրդային Միության անկախությանն ըստ պատշաճության ամեն մի փորձ ամենազճռական ու հուժկու դիմադրության կհանդիպի նրա կողմից: Խորհրդային Միությունը նմանապես ողնության կհասնի այնպիսի բարեկամ յերկրի, ինչպիսին է Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետությունը, յեթե ձապրոնիան սիրտ անի հարձակվել նրա վրա, ըստ պատշաճով նրա անկախությանը: Ընկեր Ստալինը պարզ ու վորոշակի ասաց այդ մասին:

Ընկեր Ստալինի զրույցի յուրաքանչյուր տողից ցայտում է անհողողող վստահություն՝ Խորհրդային Միության ուժի ու հզորության նկատմամբ, նրա մեծ գործի արդարացիության նկատմամբ, այն ուղու

ճշտության նկատմամբ, վորով նա ընթանում է:

Արտասահմանում մեր յերկրի շուրջը մինչև այժմ ել գոյություն ունեն չափազանց շատ միամիտ, սխալ և միանգամայն անհեթեթ պատկերացումներ, վորոնք պաշտպանում, տարածում են մեզ վոչբարյացակամ մարդիկ և մեր թշնամիները: Պ. Հոուարդի հարցերին ընկեր Ստալինի տված պատասխանները ջախջախիչ հարված են հասցնում այդ հեքիաթներին ու բամբասանքներին:

Ընկեր Ստալինն իր զրույցի մեջ հակիրճ, բայց սպառիչ կերպով բացատրեց Խորհրդային յերկրի սոցիալիստական հասարակարգի հիմունքները: Իր պարզորոշությամբ և խորությամբ կլասիկ այդ բացատրությունը միևնույն ժամանակ արտահայտված է Ստալինի համար սովորական՝ գիտական ճշմարտության ձևով:

Դրա հետ միասին նա մանրամասնորեն բացատրեց Խորհրդային Միության նախապատրաստվող նոր սահմանադրության հիմունքները: Նոր սահմանադրության ընդու-

նումը հսկայական նշանակութիւնն է ունենալու վրէժ միայն Միութեան մեջ, այլև նրանից դուրս, վրոյվհետև խորհրդային նոր սահմանադրութիւնը, — ասում է ընկեր Ստալինը, — «ամենադեմոկրատիկ սահմանադրութիւնը կլինի աշխարհում դոյութիւնն ունեցող բոլոր սահմանադրութիւնների մեջ»:

Ընկեր Ստալինի ղրույցին ծանոթանալիս՝ յուրաքանչյուր խորհրդային քաղաքացու աչքի առջև, ամբողջ աշխարհի աշխատավորութեան աչքի առջև կանգնում է մեր յերկրի փայլուն կերպարանքը, մի յերկրի, վորն իրականացնում է մարդկութեան լավագոյն զավակների յերազանքն ու մտքերը՝ հասարակութիւնը ժողովրդական բաղմամբիւրոն մասսաների շահերի համաձայն կռուցելու մասին:

Խորհրդային յերկրի բանվոր դասակարգը, դաշն կնքած գյուղացիութեան հետ, բոլշեիկյան կուսակցութեան և իր մեծ առաջնորդներ Լենինի ու Ստալինի ղեկավարութեամբ, դուրս կորդեց յերկիրը կապիտա-

լիզմի կապանքներից, վերացրեց Փարիկաների, գործարանների, հողի, բանկերի ու տրանսպորտային միջոցների մասնավոր սեփականութիւնը և փոխարինեց վերջինս հանրային սեփականութեամբ, կազմակերպեց սոցիալիստական հասարակարգ, վրէժնչացրեց գործադրութիւնը և պայմաններ ստեղծեց աշխատավորների նյութական կուտուրական մակարդակը սիստեմատիկորեն բարձրացնելու համար, ապահովեց խորհրդային պետութեան քաղաքացիների անձնական և ամեն տեսակ ալ ազատութիւնները, վրոյվհետև «խական ազատութիւն, — ասում էր ընկեր Ստալինը, — կա միայն այնտեղ, վորտեղ վրէժնչացված է շահագործումը, վրտեղ չկա վրոշ մարդկանց ճնշումը մյուսների կողմից, վրտեղ չկա գործադրութիւն և աղքատութիւն, վրտեղ մարդ չի դողում, թե վաղը կաւորոյ է կորցնել իր աշխատանքը, բնակարանը, հացը»:

Խորհրդային նոր սահմանադրութիւնն — ամբողջ աշխարհի ամենաազատ և ամենա-

դեմոկրատական պետութեան այդ հիմնական
որենքը — եւլ ավելի մեծ չափով եւ արտա-
հայտում խորհրդային իշխանութեան ժողո-
վրդական բնույթը: Խորհրդային դեմո-
կրատիայի ծավալմանն ուղեկցելու յետո-
յիսլիդի հետագա աճումը մեր յերկրում:
Մենք քայլ առ քայլ մոտենալու յենք այն
բանին, վորպեսզի ներկա կարգերից, յերբ
մարդիկ իրենց աշխատանքի համար հասա-
րակութիւնից ստանում են ըստ աշխատան-
քի քանակի ու վորակի, — անցնենք այն-
պիսի կարգերի, յերբ մարդիկ կստանան
ըստ իրենց պահանջմունքների: Այդ կնշա-
նակի, վոր մենք կոմունիստական հասարա-
կութիւն ենք կառուցել:

Ընկեր Ստալինի ղրույցը, նրա մտքերը
պատերազմի ու խաղաղութեան մասին,
սոցիալիզմի հետագա աճման մասին,
խորհրդային նոր սահմանադրութեան մա-
սին, պարզաբանելով ամբողջ աշխարհին
միջազգային հարաբերութիւնների ասպարե-
զում և յերկրի ներսում վարվող խորհրդա-
յին քաղաքականութեան ելուցումը, միև-

նույն ժամանակ նոր յեռանդ կներշնչեն սո-
ցիալիզմ կառուցողների մեծ բանակին, վո-
րոնք խանդավառութեամբ կառուցում են
յերկրորդ հնգամյակի հոյակապ շէնքը: Սո-
ցիալիստական հեղափոխութեան հանճարն
իր հզոր մտքի լուսարձակով լուսաւորում
եւ կոմունիզմի ճանապարհը: Յեւ ինչ խո-
չընդոտներ ել պատահեն այդ ճանապար-
հին, նրանք դեն կչարտվեն: Չկա աշխար-
հում այնպիսի ուժ, վորը կարողանա վանդ-
նեցնել մեր հաղթական առաջընթացը դեպի
կոմունիստական հասարակութեան ամենա-
յերջանիկ ժամանակը:

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԽՈՍՔԵՐԻՆ ՌԻՆԿՆԴՐՈՒՄ Ե ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ

„Պրավդա“-յի 1936 թ. մարտի 7-ի առաջնորդը

Ընկեր Ստալինի ղրույցը ամերիկյան «Սկրիպս-Հոուարդ Նյուզ Փեյփերս» լրագրային միավորման նախագահ պարոն Ռոյ Հոուարդի հետ՝ հակադասական արձագանք գտավ ամբողջ աշխարհում: Ընկեր Ստալինի պատասխանները պարոն Ռոյ Հոուարդի հարցերին հրապարակվել են համարյա բոլոր յերկիրներում և լայնորեն մեկնաբանվում են վորպես առաջնակարգ կարեորություն ունեցող մի դեպք: Ընկեր Ստալինի հայտարարությունները հակադասական հետաքրքրություն առաջացրին կապիտալիստական աշխարհի աղաքանակության ամենաբազմազան խավերում: Բոլոր յերկիրների աշխատավոր ժողովուրդների համար ընկեր Ստալինի խոսքերը, վորոնք պարզորոշ ու

սպառնալից պատասխան են տալիս զարգացման ներկա շրջանի ամենաակտուալ, ամենահրատապ պրոբլեմներին, անբաժանելի յեն խորհրդային Միության մեծ դործից, սոցիալիզմի, խաղաղության, ժողովուրդների յեղբայրության դործից: Ընկեր Ստալինի հայտարարությունները հակադասական հետաքրքրություն առաջացրին ամբողջ աշխարհում հատկապես այն պատճառով, վոր նրանց մեջ հնչում է անպարտելի ուժը խորհրդային Միության — աշխատավորների այդ հույսի, աշխատավորների, վորոնք սիրով ու հիացմունքով են դիտում աշխարհի միակ սոցիալիստական պետության անընդհատ աճող ուժը:

Ընկեր Ստալինի հայտարարություններին ուշի ուշով ականջ են դնում նաև կապիտալիստական աշխարհի դեկավար շրջանները: Բուրժուազիայի դործիչներին մեջ արդեն քիչ չեն այնպիսիները, վորոնք սկսել են յուրացնել այն ճշմարտությունը, թե խորհրդային Միության, վորպես խաղաղության դործոնի, նշանակությունը բացառիկ կեր-

սրով մեծ ե: ԽՍՀՄ-ն իր ամբողջ ուժով, — իսկ նա ուժեր չատ ունի, և այդ ուժերը հոկայական են,—պայքար ե մղում խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու համար: Նա պատրաստ ե ամենալայն համադրածակցություն հաստատել կապիտալիստական այն յերկիրներին հետ, վրոնք այս կամ այն պատճառով ձգտում են խուսափել պատերազմից:

ԽՍՀՄ-ն չահադրդոված ե այդպիսի համադրածակցությամբ, թեպետ մեր ժողովուրդն ինքը կարող ե հաջողությամբ պաշտպանել իր սահմանները և իր անդորրությունը: Սակայն ԽՍՀՄ-ն չահադրդոված ե ընդհանուր խաղաղության ամրապնդմամբ: Խորհրդային Միության արտաքին քաղաքականության այդ նպատակը լիակատար պարզորոշությամբ, ուղղամտությամբ և ուժով չեչտեց ընկեր Ստալինը: Յեվ կապիտալիստական այն յերկիրներում, վրոնց կառավարող չրջաններն իրենք են մտահոգված Փաշիստական ագրեսիվ ուժերի հարձուեն ակտիվությամբ,

ընկեր Ստալինի խոսքերը հավանության բազմաթիվ արձագանքներ գտան: Այդ վերաբերում ե մասնավորապես անգլիական մամուլի խոչորագույն ղեկավար րոդաններին: Բնորոշ ե գերմանական «Բեռլիներ Տագբլատ» թերթի Լոնդոնի թղթակցի համադրագրությունը, վրոն, ըստ յերեութին, ցավ ի սիրտ հարկադրված ե արձանագրել. «պահպանողական թերթերը գտնում են, վրո Ստալինի ղրույցն իրոք խաղաղության գործին և ծառայում»:

Անգլիական մամուլն առանձնապես ընդգծում ե ընկեր Ստալինի այն հայտարարությունը, թե ԽՍՀՄ-ն ուսնդակություն ցույց կտա Մոնղոլիայի ժողովրդական Հանրապետությանը, յեթե ձապոնիան նրա վրա հարձակվի, և այդ հայտարարությունը մամուլը պնհատում ե վրոպես մի նախադդուչացում՝ ձապոնական իմպերիալիզմի արկածախնդիր տարրերին: Ընդամին թերթերը հանդում են այն յեղրակացության, վրո ընկեր Ստալինի հայտարարությունը՝ Մոնղոլիայի ժողովրդական Հան-

քաղեստութեանն ոգնելու մասին, կհարկադրի ծապոնիայի ագրեսսիվ շրջաններին թերևս խելքի գալու և դրանով իսկ ծառայում է խաղաղութեան ամրապնդմանը:

Ընկեր Ստալինի զրուցյի այդ մասն ավելի լայն է մեկնաբանում ամերիկյան մամուլը, վորը մատնանշում է, թե խաղաղութեան համար ԽՍՀՄ-ի մղած պայքարը հենվում է նրա վիթխարի ուժի վրա: Նույնիսկ Հըրստի ռեակցիոն Փաշխտական թերթերը, ինչպես, որինակ, «Նյու-Յորք Ամերիկեն»-ը, հակադրված են խոստովանել այդ:

«Ստալինի նախազգուշացումը, — գրում է Հըրստի գլխավոր որդանը, — կարող է պարզորոշություն մտցնել Արևելքի դրութեան մեջ: Ծապոնիան կարող է պատերազմել, յեթե նա ուզում է — մեծ պատերազմ, և Ծապոնիան հանձին իր հակառակորդի չի ունենա նախկին հին Ռուսաստանը»:

Ինչպես կարելի յե տեսնել ընկեր Ստալինի հայտարարությունների առթիվ համաշխարհային մամուլի արձագանքներից, վորոնք հրապարակված են այսօր «Պրավդա»-

յում, նույնպիսի կարծիք ունեն նաև մյուս խոշոր շատ յերկիրների ղեկավար թերթերը: Մյուս կողմից, չափազանց նշանակալից է ճապոնական ու լեհական մամուլի «զուսպ» դերքը և ավելի մեծ չափով այն, վոր գերմանական մամուլը բողբոջիմ չըհրապարակեց ընկեր Ստալինի զրուցյը պարոն Ռոյ Հոուարդի հետ և յերկչոտութեամբ խուսափում է իր տեսակետն արտահայտելուց: Ասենք, ինչ կարելի յե ասել Փաշխտական մամուլի մասին, վորն ուր ավուր Խորհրդային Միութեանը վերաբերյալ ամենաչարանեղ, զրպարտիչ հերյուրանքների վարժություններ է անում, վորն անընդհատ ռազմատենչ պլաններ է քարոզում, վորը գովաբանում է իմպերիալիստական ավազակությունը և պայքար է մղում խաղաղությունը վորեւէ չափով ամրապնդելու գեմ: Փաշխտական մամուլը բացահայտորեն վատ է գգում իրեն: Յեվ նրա յերկչոտությունը սոսկ արտահայտում է Փաշխտական շրջանների չիտթությունն ու չլիվվածությունը:

Ընկեր Ստալինի պատասխանները պարոն Ռոյ Հոուարդի հարցերին խաղաղության բոլոր բարեկամներին հիշեցնում են այն վտանգը, վոր սպառնում է ժողովուրդներին ագրեսորների կողմից: Ընկեր Ստալինի խոսքերը հասան կապիտալիստական աշխարհի միլիոնավոր մարդկանց:

Ընկեր Ստալինի կողմից մեր սոցիալիստական պետության արտաքին քաղաքականության բնույթի, նպատակների և ուղղության խորն ու հանգամանորեն բացատրումն ուժեղացնում է խաղաղության բարեկամների և խորհրդային Միության հետ համագործակցելու կողմնակիցների դիրքերը բոլոր յերկիրներում: Խաղաղության գործի խոչոր հաջողությունն է հանդիսանում փոխադարձ ոգնության Փրանս-խորհրդային պայմանագրի վավերացումը Փրանսական պատգամավորների պալատում և պայմանագրի հավանություն պտնելը Փրանսական սենատի արտաքին գործերի հանձնաժողովի կողմից: Ֆրանս-խորհրդային պայմանագրերը «վորոչ խոչընդոտ է խաղաղության

թշնամիների համար»: Այդպիսով ընկեր Ստալինը մատնանշում է, թե ինչ ուղղությամբ պետք է առաջ դնա խաղաղության համար մղվող պայքարը, — դա փոխադարձ ոգնությունն է, կոլեկտիվ ապահովությունը, համագործակցության ամրապնդումն այն ժողովուրդների ու պետությունների միջև, վորոնք ցանկանում են խոչընդոտ ստեղծել պատերազմի վտանգի դեմ:

Խորհրդային Միությունն անում է իրենից կախված ամեն ինչ՝ մյուս պետությունների հետ իր ունեցած նորմալ փոխհարաբերություններն ամրապնդելու համար, դտնելով, վոր դա խաղաղությունը պահպանելու դըլխավոր նախադրյալներից մեկն է: Միանգամայն ակներև է, վոր ամեն մի կապիտալիստական պետության քաղաքականությունը նախ և առաջ ստուգվում է այն բանով, թե ինչպես է վերաբերվում նա խորհրդային Միությանը: Յեւլ այդ կապակցությամբ պետք է ասել, վոր այսպես կոչված «խորհրդային սրբապաշտուղայի» հարցը կապի-

տալիստական յերկիրներէ տիրապետող դասակարգերի հակախորհրդային խմբավորումներէ դործիքներէ մեկն է:

Խորհրդային Միութիւնը չի խառնուել և չի խառնվում մյուս պետութիւնների դործերին: «Հեղափոխութեան արտահանումը, — հայտարարում է ընկեր Ստալինը, — անհեթեթութիւն է»:

Բոլոր յերկիրներում միլիոնավոր աշխատավորներ իրենց սեփական փորձով համոզվում են, թէ վորոնք են կապիտալիստական սիստեմի արատները: Միլիոնավոր դործադուրկները, մասսաների զրկանքն ու աղքատութիւնը, դասակարգային ճնշումը և մարդկային տարրական իրավունքների վտանահարումը, Փինանսական կապիտալի մի խումբ մադնատների, խոշոր կալվածատերերի ու արխատուկրատիայի տիրապետութիւնը քաղաքի և գյուղի միլիոնավոր աշխատավորների վրա, — մի¹⁰ թէ դրանք բավականաչափ ծանրակշիռ փաստարկումներ չեն կապիտալիստական սիստեմի դեմ: Յեթէ հավաքեյինք այն տվյալները, վորոնք

հրապարակվում են միմիայն համաշխարհային բուրժուական մամուլում կապիտալիստական յերկիրների մասսաների աղետալի դրութեան մասին, ապա մեծածավալ հատորներ կստացվէին: Կապիտալիզմն իր բոլոր խոցերով ինքն է ագիտացիա մղում իր դեմ: Ել չենք ասում, վոր Փաշիգմի խժեժութիւնները և բարբարոսութիւնը Գերմանիայում, Իտալիայում, Լեհաստանում և մի շարք այլ յերկիրներում, արտասովոր ուժով ցույց տվին ժողովրդական մասսաներին, թէ դադաղման ինչ աստիճանի կարող են հասնել տիրապետող դասակարգերը՝ իշխանութիւնն ու չահագործողների դասակարգային արտոնութիւններն իրենց ձեռքում պահելու ձգտման մեջ: Դրանից աշխատավոր մասսաները համապատասխան յեղրակացութիւններ են անում: Նրանք պայքար են մղում իրենց չահերի համար, իրենց իրավունքների համար — ընդդեմ Փաշիգմի, ընդդեմ նոր պատերազմի վտանգի:

Հարց ե ծագում, ի՞նչ դործ ունի այստեղ
«Խորհրդային պրոպագանդան»:

Խորհրդային Միությունն իր արտաքին
քաղաքականությունը վարում է բացահայտ
կերպով. նա կարիք չունի թաղցնելու իր
նպատակները այդ նպատակները ղուգաղի-
պում են ժողովուրդների շահերի հետ, խա-
ղաղության շահերի հետ: Խորհրդային Մի-
ությունը վոչվոքի չի սպառնում և նա բա-
վականաչափ ուժեղ է, վարպետի իր հեր-
թին նույնպես չվախենա վորեւ մեկի ըս-
պառնալիքներից: Նրա արտաքին քաղաքա-
կանությունը պարզորոշ է, մյուս յերկրնե-
րի հետ համագործակցելու նրա ձգտումը
հիմնված է իր ստանձնած պարտավորու-
թյունները լոյալ կատարելու և մյուս ժողո-
վուրդներին հարգանք ցուցաբերելու վրա:

ԽՍՀՄ-ն չահագորդված է խաղաղության
ճակատի ընդարձակմամբ, ժողովուրդների
համագործակցության ամրապնդմամբ, վո-
րովհետեւ այդ բոլորը նա վորոշ յերաչխիք է
համարում Փաշխտական ագրեսսորների դե-
տավորությունների դեմ: Խորհրդային Մի-

ության հետևողական խաղաղասիրական
քաղաքականության շնորհիվ բաղմաթիվ
նման դետավորություններ հոգս ցնդեցին:
Սակայն այն ուժերը, վորոնք սպառնում են
խաղաղությանը, շարունակում են իրենց
ակտիվ դործունեյությունը: Դրա համար ել
Խորհրդային Միությունը, ինչպես մինչև
այժմ, պալքար է մղելու ընդհանուր ապա-
հովության համար, խաղաղության անբա-
ժանելիության համար, ագրեսսորներին դե-
մադրություն կաղմակերպելու համար:

Համաշխարհային մամուլում ընկեր Ստա-
լինի հայտարարությունները դտած արձա-
ղանքները ցույց են տալիս, վոր Խորհրդա-
յին Միության այդ պալքարը քանի դնում,
այնքան ալիելի լայն ու հզոր ոժանդակու-
թյուն է դտնում:

ՌՈՅ ՀՈՈՒԱՐԴՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՀԵՏ ՌԻՆԵՑԱԾ ԻՐ ԶՐՈՒՅՅԻ ՄԱՍԻՆ

Ամերիկյան խոշորագույն հեռագրական գործակալությունները՝ «Ասոչիետեդե Պրեսսա» և «Յունայտեդ պրեսսը», տարածել են ընկեր Ստալինի՝ Ռոյ Հոուարդի հետ ունեցած զրույցը: Սկրիպպս-Հոուարդի խմբագրական հաղորդման մեջ նշված է, Վորայդ զրույցի մեջ «Ստալինը բացառիկ անհեղձությամբ արտահայտվել է Խորհրդային Միության՝ Ամերիկայի և մնացած ամբողջ աշխարհի հետ ունեցած հարաբերություններին»:

Զրույցի չարադրմանը Ռոյ Հոուարդը վրեժ է ներածական, Վորի մեջ ասված է.

«Յերեք ու կես ժամ տևող զրույցի ընթացքում, Վոր տողերիս դրողն ունեցավ Ստալինի հետ, զրույց, Վորի ընթացքում

քննարկվեցին ԽՍՀՄ-ի հարաբերություններն արտաքին աշխարհի հետ, միջազգային ընդհանուր դեպքերը, պատերազմի սպառնալիքը և մանավանդ խորհրդային-ամերիկյան հարաբերությունները, Ստալինը չնչոք ներկայումս գոյություն ունեցող խիստ լարված դրությունը, ինչպես նաև այն նշանակությունը, Վորը ԽՍՀՄ-ն տալիս է մանջուր-մոնղոլական սահմանում վերջին շրջանում ուժեղացող բաղխումներին:

Զրույցը տեղի ունեցավ Կրեմլում, Ստալինի կարինետում, ըստ վորում յերրորդ անձնավորությունը, Վոր թարգմանում էր զրույցը, Կոնստանտին Ումանսկին էր, Վորը վերջերս նշանակվել է Վաշինգտոնի խորհրդային լիազոր ներկայացուցչության խորհրդական: Զրույցի ժամանակ չկար փաստաբանական պերճախոսություն և թատերականություն: Ստալինը դուրեկան ձայն ունի և բարեհամբույր է: Նա յերբեք հուշակ ու համբավ չի վորոնել արտաքին փայլի համար: Նրա խոսելու յեղանակի

մեջ քիչ բան կա, վորից յերևա նրա համարյա միատիկական ուժը, վորով նա կառավարում է 173 միլիոն ժողովրդի կամքն ու զգացմունքները: Նա զերծ է վերամբարձությունից և վարվում է քաղաքացունման, առանց զինվորականի շարժ ու ձևերի: Նրա խոսելու բարեկամական յեղանակը, պաշտոնականության բացակայությունը և դեպի հումորն ունեցած հակումը—դա մետաքսե ձեռնոց է, վորը հաճախ ծածկում է յերկաթե կամքի արտահայտումները: Նա յերբեմն հեղափոխականի դոգմատիզմ է հանդես բերում: Բայց համբերատար է զրույցի միջոցին, վորը պատիվ է բերում նրա պրոպագանդիստի հին վարպետությանը:

Վերջին մի քանի շաբաթվա ընթացքում Մոսկվայի ժողնալիստների հետաքրքրությունը կենտրոնացած էր գլխավորապես Արտաքին Մոնոլիթի սահմանում տեղի ունեցող դեպքերի վրա: Ճապոնական զորքերի և Մոնղոլական ժողովրդական Հանրապետության զորքերի միջև տեղի ունեցող

ընդհարումները, վորոնք վերածվում էյին ալիսպես կոչված սահմանադլիային միջադեպերի, հաճախակի էյին դառնում: Չեզոք զինվորական դիտողները յենթադրում են, վոր Ճապոնիան ձգտում է Մանջու-Գոյի միջով սեպ խփել Արտաքին Մոնոլիթի հանրապետության մեջ, վորպեսզի պատերազմի դեպքում անհնարին դարձնի բուն Չինաստանի ոգնությունը Խորհրդային Միությանը: Յեթե Ճապոնիան տիրի Ուլան-Բատորին, Արտաքին Մոնոլիթի մայրաքաղաքին, ապա ճապոնական ողային ուժերը բարենպաստ դրություն կունենան, սպառնալով Անդրսիբիրյան յերկաթուղուն նրա ամենախոցելի կետերում»:



Ընկեր Ստալինի զբույցը	5
Ուղղակի և պարզորոշ պատասխան	37
Ընկեր Ստալինի խոսքերին ունկնդրում եմ ամ- բողջ աշխարհը	48
Ռոյ Հոուսթընը ընկեր Ստալինի հետ ունեցած իր զբույցի մասին	60

Թարգմ. Հ. Թուրջյան, իմք. Նշ. Մակինց,
տեխն. իմք. Տ. Խաչվանքյան, սրբ. Լ. Աբովյան,
կոնտրոլ սրբ. Յե. Տ.-Մինասյան

Գլավիլիտ № 1036, հրատ. № 360, պատվեր № 107,

Տիրաժ 15,000, ինդեքս — 84

PK

Հանձնված է արտադրության 13 մարտի 1936 թ.
Ստորագրված է տպագրության 17 մարտի 1936 թ.

Հայկուստրասի ֆաբրիկ, Յերեվան, Ալլահվերդյան № 27

ՀՀ Ազգային գրադարան



NL0185659

201

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.



**БЕСЕДА ТОВАРИЩА СТАЛИНА
С Г-НОМ РОЙ ГОВАРДОМ**

Армнартиздат, Эривань